ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.03.2023թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի <<Ցենտռա Կոլ>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ որոշումն ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Դիմելով դատարան՝ Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է ոչ իրավաչափ և անվավեր ճանաչել թիվ ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.02.2023 թվականի № 2 արձանագրային որոշումը՝ <<Ցենտռա Կոլ>> ՍՊ ընկերության հայտը 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու մասով:

Հայցադիմումը դատարանում մուտքագրվել է 22.02.2023 թվականին և կազմվել թիվ ԵԴ/7334/02/23 քաղաքացիական գործը:

Քաղաքացիական գործը դատավորի աշխատակազմին հանձնվել է 27.02.2023 թվականին:

Դատարանի 02.03.2023 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումը դատարանում կրկին մուտքագրվել է 07.03.2023 թվականին և դատավորի աշխատակազմին հանձնվել է 09.03.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ պատասխանող ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովից պետք է պահանջել ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. <<Ցենտռա Կոլ>> ՍՊԸ-ի ընդդեմ ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ որոշումն ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովից պահանջել դատարան ներկայացնել ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ս.ԵՐԻՑՅԱՆ**